ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգիական գիտ. XVI, № 7, 1963 Биологические науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

С. М. МАРУКЯН—«ЛЕСА АГРОНОМИЧЕСКОГО ЗНАЧЕНИЯ И ХОЗЯЙСТВО В НИХ»

Գիրքը նվիրված է տնտեսության հարցին այն անտառներում, որոնք պատկանում են կոլտնտեսություններին, սովխոզներին և մյուս ֆոնդատերերին։ Հեղինակը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական օգտագործման հողերի ներսում գտնվող այդ անտառները կգալի ազդեցություն են գործում շրջապատող տերիտորիայի վրա և բարձրացնում են բոլոր գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը։ Գրքի առաջին բաժնում տրվում է այդ անտառներում առավել նշանակություն ունեցող ծառերի ու թփուտների անտառագիտական և բիոլոգիական բնութագիրը։ Առանձնահատուկ ուշադրություն է նվիրվում ծառատեսակների անտառագոյացման, պաշտպանական և տնտեսական նշանակությանը։ Նկարագրությունները հակիրճ են և ճշգրիտ։ Երկրորդ բաժնում բավականաչափ լրիվ բնութագրվում են միջավայրի բոլոր գործոնները գյուղատնտեսական անտառներում և, առանձնապես, նոր տվյալների հիման վրա շարադրված է անտառի ու քամու հարցը։ Խորհուրդ է տրվում ընտրել տնկարկների այնպիսի ստրուկտուրա, որը ավելի լավ է դիմակայում քամիներին։ Ցույց է տրված արմատային սիստեմների դերը։ Լավ են նշված փոքրազանգված անտառների ծառատունկերի լուսավորման առանձնահատկությունները։ Գյուղատնտեսական նշանակություն ունեցող փոքրազանգված անտառների բուծմանը և անբավարար տնկարկների վերակառուցմանը նվիրված գլուխը գրել է գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Վ. Վ. Միրոնովը։ Ընդհանուր ճանաչում գտած մեթոդների հետ մեկտեղ նկարագրվում է հեշտությամբ ցրվող հողերում երիտասարդ խոպանի վրա սոճու մշակույթի նոր եղանակը, որ ՎՆԻԼՄ-ի Դոնի անտառային փորձակայանում մշակել է անտառագետ Ն. Ս. Զյուզը։

Խնամքի հատումներին և գլխավոր օգտագործման հատումներին վերաբերող գլուխները, ինչպես նաև հաջորդ բոլոր գլուխները գրել է հիմնական հեղինակը՝ Ս. Մ. Մարուքյանը։ Օժանդակ օգտագործմանը նվիրված գլխում ցույց է տրվում անասունների արածեցումը կարգավորելու անհրաժեշտությունը։ Խորհուրդ է տրվում գյուղատնտեսական անտառներում ու պաշտպանական շերտերում բուծել կաքավ, փասիան և մորեկ։ Առանձնապես հետաքրքրական և ինքնատիպ է գյուղատնտեսական անտառների տնտեսական արդյունավետությանը վերաբերող գլուխը։ Դյուրամատչելի ու համոզիչ կերպով է մեկնաբանվում պաշտպանական շերտերի օպտիմալ լայնությունը որոշելու մեթոդիկան։ Առաջարկված է պարզ և հարմար բանաձև՝ դաշտապաշտպան շերտերի

---

* Издательство сельхоз. литературы, журналов и плакатов, 263, стр., Москва 1962 г.

ու պաշտպանական նշանակություն ունեցող անտառային կուլտուրաների տնտեսական էֆեկտիվությունը որոշելու համար։ Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայի անտառային փորձահողանի գրեթե 100-ամյա (1863—1959 թթ.) տնտեսական գործունեության օրինակի վրա համոզիչ կերպով ցույց է տրվում 250 հա տարածությամբ փոքրազանգված անտառում, վերջինիս օգտագործման մշտատևության ու անընդհատության հիման վրա անտառային տնտեսությունը ճիշտ վարելու տնտեսական էֆեկտիվությունը։ Ընդամին ապահովված է բնափայտի վերարտադրության ընդլայնումը։ Նշվում է, որ փոքրազանգված անտառների տարածությունը ՍՍՌՄ-ում արագ կերպով մեծանում է։ Հատնելով առավելագույն աճի, այդ անտառներն ընդունակ են տալու տարեկան շուրջ 800 միլիոն խորանարդ մետր բնափայտ, որը ավելի քան 2 անգամ գերազանցում է ՍՍՌՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանով նախատեսված փայտամթերումների ծավալը, ուստի այդ անտառներին պետք է մեծ ուշադրություն դարձնել։ Բերվում են Տամբովի մարզի Սոսնովսկի շրջանի «Լենինյան ուղի» կոլտնտեսությունում անտառային տնտեսությունը օրինակելի կերպով վարելու վերաբերյալ օրինակներ։ Հաջող կերպով ցույց է տրված, որ գյուղատնտեսական անտառները անհրաժեշտ պայման են հանդիսանում գյուղատնտեսության մեջ ընդլայնված վերարտադրություն ապահովելու համար։

Գրախոսվող գիրքը ուրախալի երևույթ է անտառային ու գյուղատնտեսական գրականության մեջ և ժողովրդական տնտեսության այդ երկու ճյուղերը միավորում է որպես միասնական մի սիստեմ և հետաքրքրություն է ներկայացնում անտառագետների ու գյուղատնտեսների համար։

Ի. Կ. ՖՈՐՏՈՒՆԱՏՈՎ